ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի **N 01-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 12-ի թիվ 01 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Ղազարյան):
2.Վայք համայնքում 2026թ-ին մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին (զեկուցող՝ Ն. Հովակիմյան):
3. Վայք համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնելու մասին (զեկուցող՝ Ա. Մանուկյան):
4.Վայք համայնքի բյուջեի միջոցների 2026 թվականի տարեսկզբի ազատ նմացորդի օգտագործման մասին (զեկուցող՝ Ա. Մանուկյան):
5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին (զեկուցող՝ Ա.Հովսեփյան):
6.Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների դիմաց 2026 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին (զեկուցող՝ Ա.Հովսեփյան):
7.Վայք համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Մանուկյան):
8.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Ղազարյան):
9.Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և

10. Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող հողատարածքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու և համայնքի ավագանու 13.11.2025 թվականի թիվ 105-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին (զեկուցող՝ Ռ. Մկրտչյան):
11.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին (զեկուցող՝ Ռ. Մկրտչյան):
12.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները սահմանելու մասին (զեկուցող՝ Ռ. Մկրտչյան):
13.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **02-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 Թ-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքում սկսել 2026թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2.Վայք համայնքի 2026թ-ին բյուջեում հատկացնել 40 000 000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2026թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 40 000 000 ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել բարեկարգման ոլորտը՝ որպես առաջնահերթություն:

7. Համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026 թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային

պլանում և բյուջեում:
2) Համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկները ներկայացնել ավագանուն:
3) Իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **03-Ն**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու
12. 01. 2026թ. թիվ 3-Ն որոշման

Տարեկան հաշվետվություն
Վայք համայնքի 2025 թ. բյուջեի կատարման վերաբերյալ

Համայնքի 2025թ. բյուջեի եկամտային մասում նախատեսվել են 1285815,5 հազ. դրամի եկամուտներ, իսկ փաստացի հավաքագրվել է 1306545,3 հազ. դրամ եկամուտ, այսինքն՝ առաջադրանքը կատարվել է 101,6%-ով, որից.

/հազ. դրամ/

	Եկամուտների անվանումը	նախատեսված	փաստացի	կատարման %
1	Հողի հարկ	2000,0	1228,9	61,4
2	Գույքահարկ շենքերի և շինությունների	1000,0	243,9	24,4
3	Անշարժ գույքի հարկ	28500,0	33149,6	116,3
4	Գույքահարկ փոխադրամիջոցների	84700,0	88952,2	105,0
5	Տեղական տուրքեր	10800,0	11678,3	108,1
6	Պետական տուրքեր	4000,0	9479,0	236,9
7	Վարձակալությունից մուտքեր	152530,1	164793,1	108,0
8	Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհներ /դոտ. և նպ. հատ./	640153,6	640153,7	100,0
9	Պաշտոնական և ոչ պաշ. կապիտալ դրամաշնորհներ	255670,3	255720,5	100,0
10	Տեղական վճարներ	27800,0	31501,6	113,3
11	Այլ եկամուտներ	78661,5	69644,5	88,5
	Ընդամենը	1285815,5	1306545,3	101,6:

Համայնքի 2025թ. բյուջեի ծախսային մասում նախատեսվել են 1497256,1 հազ. դրամի ծախսեր, իսկ փաստացի կատարվել է 1249718,9 հազ. դրամի ծախս, որից.

/հազ. դրամ/

	Ծախսերի անվանումը	նախատեսված	փաստացի	կատարման %
1	Համայնքապետարանի պահպանման ծախսեր	329800,0	298333,8	90,5
2	Աշխատակազմի գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	1999,0	1999,0	100,0
3	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	69240,0	32342,4	46,7
4	Գյուղատնտեսություն	103427,2	103002,6	99,6
5	Ոռոգում	0	0	0.0
6	Աղբահանում	85000,0	84460,0	99,4
7	Ճանապարհային տրանսպորտ	450922,0	444725,0	98,6
8	Ջրամատակարարում	10000,0	0	0.0
9	Փողոցների լուսավորում	19000,0	13470,8	70,9
10	Մշակույթի տներ,ակումբներ,կենտրոններ	33600,0	32949,7	98,1
11	Այլ մշակութային կազմակերպություններ	58550,8	54138,4	92,5
12	Նախադպրոցական կրթություն	190994,0	183620,5	96,1
13	Արտադպրոցական դաստիարակություն	54560,0	54144,0	99,2
14	Սոցիալական հատուկ արտոնություններ	4000,0	700,0	17,5
15	Պահուստային ֆոնդ	158763,1	0	0,0
16	Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկա.	72600,0	.54167,3	74,6
	Ընդամենը	1497256,1	1249718,9	83,5:

Համայնքի ղեկավար՝ Մ. Մաթևոսյան

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Վայք համայնքի ավագանու անդամներ Անուշ Արամյանս ու Արմինե Ոսկանյանս, իրականացրեցինք Վայք համայնքի 2025թ. բյուջետավարման գործընթացի առանձին փուլերի և համայնքի ղեկավարի ներկայացրած 2025թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ուսումնասիրություններ, որի արդյունքում կատարեցինք հետևյալ եզրակացությունը.

1. Համայնքում բյուջեի կազմման գործընթացը հիմնականում համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ընթացակարգերին և մեթոդական ցուցումներին: Բյուջեի պլանավորման գործընթացը կազմակերպվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագրի՝ ՀԶՀԾ-ի և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի՝ ՏԱՊ-ի, ինչպես նաև նախորդ տարիների տվյալների հիման վրա: Բյուջեի պլանավորման փուլի ուսումնասիրության արդյունքում արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերում են բյուջեի նախագծի կազմման, քննարկման և հաստատման գործընթացի մասնակցայնությանն ու հրապարակայնությանը,որն ապահովվել է մասամբ: Համայնքի բնակիչները շատ դեպքերում հետաքրքրություն չեն դրսևորում և չեն մասնակցում այն հարցերում, որոնք իրենց առօրյա գործունեությանը չեն առնչվում կամ քիչ են առնչվում:

2. 2025թ. բյուջետավարման գործընթացը համայնքում ամբողջությամբ չի հիմնվել ծրագրային բյուջետավարման մեթոդաբանության և գործիքների կիրառման վրա: Թեպետ ներդրվել են ծրագրային բյուջեի մեթոդաբանությունը, մոտեցումներն ու գործիքները, սակայն այն գործնականում լիարժեքորեն չի կիրառվել, այսինքն՝ կազմվել է ծախսային բյուջե:

3. Համայնքում 2025թ. բյուջեի կատարման գործընթացը հաշվետվությունների հրապարակման տեսանկյունից թափանցիկ է: Բյուջեում կատարվող փոփոխությունների հրապարակայնությունն ապահովվել է համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջում՝www.vayk.am, ավագանու որոշումների տեղադրման միջոցով:

4. Վայք համայնքի 2025թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման գործընթացը թափանցիկ ու մասնակցային է եղել մասամբ: Համայնքում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ և քննարկումներ: Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հանրության իրազեկման լավագույն տարբերակը եղել է համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջը՝ համապատասխան որոշման տեղադրման միջոցով:

5. Համայնքի 2025թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ եկամտային ու ծախսային մասերում նախատեսված և փաստացի կատարված ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ բարձր են ու գոհացուցիչ:

Հիմք ընդունելով վերոգրյալը Վայք համայնքի ղեկավարի ներկայացրած 2025թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը գնահատում ենք դրական:

Վայք համայնքի ավագանու անդամներ՝ Անուշ Արամյան _____

Արմինե Ոսկանյան _____

12 հունվարի 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **04-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի բյուջեի վարչական մասի 2026 թվականի տարեսկզբի ազատ մնացորդից 4 898 743.1 (չորս միլիոն ութ հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր քառասուներեք ամբողջ մեկ) ՀՀ դրամ գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների մարման՝ էներգետիկ, կապի, կոմունալ ծառայությունների և այլ կրեդիտորական պարտքերի վճարման նպատակով, իսկ մնացած 250 000 000.0 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ գումարն ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Վայք համայնքի բյուջեի ֆոնդային մասի 2026 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 13 388 351.9 (տասներեք միլիոն երեք հարյուր ութսունութ հազար երեք հարյուր հիսունմեկ ամբողջ ինը) ՀՀ դրամ գումարն ուղղել կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով (սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում) համաֆինանսավորմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **05-Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի 2026 թվականի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում օրենքով սահմանված տեղական վճարների 2026 թվականի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում համայնքային ոչ առեվտրային կազմակերպություններում ուսման վարձի և ծնողական վճարների ամսական արտոնություններ՝ համաձայն հավելված 3-ի:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **06-Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել 2026 թվականի համար Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը և տարածվում է 2026թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու
2026թ. հունվարի 12-ի թիվ 06-Ն որոշման

Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների դիմաց 2026 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը.

Հ/հ	Աշխատանքի , ծառայության անվանումը	Չափման միավորը	Վճարի չափը՝ ներառյալ վառելիքը /դրամ/	Վճարի չափը՝ առանց վառելիքի /դրամ/
1	խոտհունձ	1 հա	12000	8000
2	խոտհավաք	1 հա	8000	6000
3	հակավորում	1 հատ	100	60
4	վար	1 հա	30000	14000
5	ցանք	1 հա	12000	6000
6	փոցխում	1 հա	7000	4000
7	կուլտիվացիա	1 հա	12000	8000
8	հացահատիկի բերքահավաք	1 հա	22000	14000
9	կրկնավար	1 հա	22000	10000
10	փոցխում վարելահողի	1 հա	10000	6000
11	խոտհունձ կոմբայնով	1 հա	18000	14000
12	հողի փխրեցում ֆրեզով	1 հա	110000	100000
13	էքսկավատորային աշխատանքներ	1 ժամ	10000	6000
14	ուղևորափոխադրման ծառայություններ	1 կմ	15	
15	ավտոկռունկով աշխատանքներ	1 օր		60000
16	բեռնափոխադրման ծառայություններ MAZ-ով	1 օր		40000
17	դաշտերի սրսկում	1 հա	12000	9000
18	այգիների սրսկում	1 հա	20000	15000
19	ծառայություններ ճանապարհային մեքենայով	1 օր		40000

Ծանոթություն. Նշված դրույքաչափերը գործելու են միայն համայնքի բնակիչ հանդիսացող ֆիզիկական անձանց համար, իսկ համայնքի բնակիչ չհանդիսացող ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց համար նշված դրույքաչափերին ավելացվելու է և՝ 5000 դրամ, բացառությամբ հավելվածի 3-րդ ու 14-րդ կետերով սահմանված հակավորման և ուղևորափոխադրման ծառայությունների: Իսկ հավելվածի 15-րդ կետով նահմանված ավտոկռունկով աշխատանքների դեպքում բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար գործելու է նաև 1 ժամը - 9000 դրամ դրույքաչափը՝ առանց վառելիքի:

Համայնքի ղեկավար՝ Մ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 07-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդհոդվածի 5-րդ մասով, 33-րդհոդվածի 3-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի 2026թ. բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 1063825,3 հազար ՀՀ դրամ,

2) ծախսերի գծով՝ 1332112,4 հազար դրամ,

3) հավելուրդը / դեֆիցիտը (պակասուրդը)՝ 268287,1 հազար ՀՀ դրամ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված 4-ի:

6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի:

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:

8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

1) թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 25% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

2) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 25%-ը:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀՀ ՎԶՄ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒՂԵՐՁ
ՎԱՅՔ – 2026 թ.

ՀՀ ՎԶՄ Վայք համայնքի 2026թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2022 - 2026թթ. հնգամյա զարգացման ծրագիրը և 2026թ. տարեկան աշխատանքային պլանը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Համայնքի 2026 թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- ✓ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի, գույքահարկի, անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,
- ✓ Բարձրացնել ՏԻՄ-ի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը,
- ✓ Բարձրացնել քաղաքային ու գյուղական բնակավայրերում բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,
- ✓ Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի ճանապարհային տնտեսության, ոռոգման, ջրամատակարարման և բարեկարգման բնագավառներում,
- ✓ Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը,
- ✓ Նպաստել համայնքում հողագործության և անասնապահության աճին,
- ✓ Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր, օժանդակել սահմանների պաշտպանությանը, կանխել արտագաղթը, ձեռնարկել միջոցառումներ արտակարգ իրավիճակներում և այլն:

Համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող ՀՈԱԿ-ներում 2026թ. նախատեսվել է 221 հաստիքային միավոր, իսկ աշխատավարձի ֆոնդի համար՝ 379656,0 հազ. դրամ:

Համայնքի 2026թ. սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանն ու վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը, քաղաքային ու գյուղական բնակավայրերի համաչափ զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ներկայացնում եմ Վայք համայնքի 2026 թվականի բյուջեի եկամտային ու ծախսային մասերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման.

<u>Համայնքի բյուջեի եկամտային մաս – 1088825,3</u> հազ. դրամ, այդ թվում՝

Վարչական մասի եկամուտներ – <u>1063825,3</u> հազ. դրամ, որից՝

Հողի հարկ՝ 2500,0 հազ. դրամ

Գույքահարկ շենքերի և շինությունների համար՝ 600,0 հազ. դրամ

Անշարժ գույքի հարկ՝ 36800,0 հազ. դրամ

Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 96000,0 հազ. դրամ

Տեղական տուրքեր՝ 11000,0 հազ. դրամ

Պետական տուրքեր՝ 6000,0 հազ. դրամ
Պետբյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 695683,2 հազ. դրամ
Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ 3742,1 հազ. դրամ
Համայնքի սեփականություն համարվող հողերի և այլ գույքի վարձավճարներ՝ 156500,0 հազ. դրամ
Տեղական վճարներ՝ 33800,0 հազ. դրամ
Այլ եկամուտներ՝ 21200,0 հազ. դրամ:
Ֆոնդային մասի եկամուտներ - 25000,0 հազ. դրամ, որից՝
Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ 25000,0 հազ. դրամ:
Տարեսկզբի ազատ մնացորդ – 268287,1 հազ. դրամ, որից՝
Վարչական մասի մնացորդ՝ 4898,7 հազ. դրամ
Ֆոնդային մասի մնացորդ՝ 263388,4 հազ. դրամ:

Համայնքի բյուջեի ծախսային մաս – 1357112,4 հազ. դրամ, այդ թվում՝
01.1.1 - Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում՝ 350900,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 - 285000,0 հազ. դրամ
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հավելավճարներ 4112 - 28500,0 հազ. դրամ
-Էներգետիկ ծառայություններ 4212 - 11000,0 հազ. դրամ
-Կոմունալ ծառայություններ 4213 - 600,0 հազ. դրամ
-Կապի ծառայություններ 4214 - 2800,0 հազ. դրամ
-Ապահովագրական ծախսեր 4215 - 900,0 հազ. դրամ
-Ներքին գործուղումներ 4221 - 900,0 հազ. դրամ
-Համակարգչային ծառայություններ 4232 - 4900,0 հազ. դրամ
-Տեղակատվական ծառայություններ 4234 - 600,0 հազ. դրամ
-Մասնագիտական ծառայություններ 4241 - 3000,0 հազ. դրամ
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251 - 1500,0 հազ. դրամ
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252 - 1400,0 հազ. դրամ
-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261 - 1500,0 հազ. դրամ
-Տրանսպորտային նյութեր 4264 - 2500,0 հազ. դրամ
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 - 2500,0 հազ. դրամ
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269 - 1400,0 հազ. դրամ
-Պարտադիր վճարներ 4823 - 400,0 հազ. դրամ
-Վարչական սարքավորումներ 5122 - 1500,0 հազ. դրամ
01.3.1 - Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ՝ 1999,0 հազ. դրամ, այդ թվում՝
- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 - 1999,0 հազ. դրամ
01.6.1 - Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 78400,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Գույքի և սարքավորումների վարձակալություն 4216 - 1000,0 հազ. դրամ
-Ներքին գործուղումներ 4221 - 1500,0 հազ. դրամ
-Ներկայացուցչական ծախսեր 4237 - 500,0 հազ. դրամ
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 - 900,0 հազ. դրամ
-Մասնագիտական ծառայություններ 4241 - 9000,0 հազ. դրամ
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251 - 10000,0 հազ. դրամ
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252 - 1500,0 հազ. դրամ
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 - 900,0 հազ. դրամ
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269 - 5000,0 հազ. դրամ
-Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639 - 4000,0 հազ. դրամ
-Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657 - 4000,0 հազ. դրամ
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին 4819 - 1000,0 հազ. դրամ
-Պարտադիր վճարներ 4823 - 3600,0 հազ. դրամ
-Շենքերի և շինությունների կառուցում 5112 - 7000,0 հազ. դրամ
-Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 28500,0 հազ. դրամ
04.2.1 - Գյուղատնտեսություն՝ 94000,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 93700,0 հազ. դրամ
-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 300,0 հազ. դրամ
04.5.1 - Ճանապարհային տրանսպորտ՝ 188700,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 - 185000,0 հազ. դրամ
-Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 3700,0 հազ. դրամ

05.1.1 - Աղբահանում՝ 117400,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Մասնագիտական ծառայություններ 4241 - 52000,0 հազ. դրամ
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 64700,0 հազ. դրամ
-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 700,0 հազ. դրամ
06.3.1 - Ջրամատակարարում՝ 62688,4 հազ. դրամ, այդ թվում՝
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 - 58588,4 հազ. դրամ
-Նախագծահետազոտական ծախսեր 5134 - 4100,0 հազ. դրամ
06.4.1 - Փողոցների լուսավորում՝ 18000,0 հազ. դրամ, այդ թվում՝
-էներգետիկ ծառայություններ 4212 - 18000,0 հազ. դրամ
08.2.3 - Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ՝ 27700,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 27000,0 հազ. դրամ
-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 700,0 հազ. դրամ
08.2.4 - Այլ մշակութային կազմակերպություններ՝ 60900,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 - 7500,0 հազ. դրամ
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269 - 4500,0 հազ. դրամ
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 47900,0 հազ. Դրամ
-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 1000,0 հազ. դրամ
09.1.1 - Նախադպրոցական կրթություն՝ 161953,2 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 160453,2 հազ. դրամ
-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 1500,0 հազ. դրամ
09.5.1 - Արտադպրոցական դաստիարակություն՝ 63023,6 հազ. դրամ, այդ թվում՝
-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4637 - 61723,6 հազ. դրամ
-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին 4655 - 1300,0 հազ. դրամ
10.7.1 - Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/՝ 4000,0 հազ. դրամ, այդ թվում՝
-Այլ նպաստներ բյուջեից 4729 – 4000,0 հազ. դրամ
11.1.2 - Համայնքի պահուստային ֆոնդ՝ 127448,2 հազ. դրամ, այդ թվում՝
-Պահուստային միջոցներ 4891 - 127448,2 հազ. դրամ:

Հիշեցնում եմ համայնքի տեսլականը. Վայք համայնքը բարեկարգ և բարեկեցիկ բազմաբնակավայր համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ, զբոսաշրջությամբ ու սոցիալական ենթակառուցվածքներով, որտեղ բնակչության գերակշիռ մասն ապահովված է եկամտաբեր աշխատանքով և ունի բավարար կենսապայմաններ:

Դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանու անդամներին, աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2026թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային ու հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **08-Ա**

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2.Հաստատել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:
3.Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված հաստիքացուցակին համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

Հավելված 2

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու

2026թ. հունվարի 12-ի թիվ 08-Ա որոշման

ՀՀ Վայքց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թիվը՝ 128

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
	Համայնքային քաղաքական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	553,600		553,600
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	390,000		390,000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ /աշխարհազոր/	1	320,000		320,000
	Ընդամենը	**3**			**1,263,600**
	Համայնքային հայեցողական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	297,000		297,000
2	Համայնքի ղեկավարի օգնական	2	220,000		440,000
	Ընդամենը	**3**			**737,000**
	Համայնքային վարչական պաշտոններ				
1	Վարչական ղեկավար Ազատեկ	1	245,000		245,000
2	Վարչական ղեկավար Արին	1	220,000		220,000
3	Վարչական ղեկավար Փոռ	1	200,000		200,000
4	Վարչական ղեկավար Զեդեա	1	200,000		200,000
5	Վարչական ղեկավար Զառիթափ	1	265,000		265,000
6	Վարչական ղեկավար Գոմք	1	220,000		220,000
7	Վարչական ղեկավար Մարտիրոս	1	220,000		220,000
8	Վարչական ղեկավար Սերս	1	200,000		200,000
9	Վարչական ղեկավար Բարձրունի	1	235,000		235,000
10	Վարչական ղեկավար Խնձորուտ	1	245,000		245,000
11	Վարչական ղեկավար Նոր Ազնաբերդ	1	200,000		200,000

12	Վարչական ղեկավար Սարավան	1	220,000		220,000
13	Վարչական ղեկավար Արտավան	1	220,000		220,000
14	Վարչական ղեկավար Հերհեր	1	240,000		240,000
15	Վարչական ղեկավար Կարմրաշեն	1	200,000		200,000
	Ընդամենը	**15**			**3,330,000**
	Համայնքային ծառայության պաշտոններ				
1	Աշխատակազմի քարտուղար	1	447,800		447,800
2	Գլխավոր մասնագետ /ՔԿԱԳ/	1	166,600		166,600
3	Առաջատար մասնագետ	2	253,000		506,000
4	Առաջին կարգի մասնագետ	2	187,000		374,000
5	Երկրորդ կարգի մասնագետ	16	165,000		2,640,000
	Ընդամենը	**22**			**4,134,400**
	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
1	Բաժնի պետ	1	363,000		363,000
2	Բաժնի պետի տեղակալ-ֆինանսիստ	1	350,000		350,000
3	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	330,000		330,000
4	Գլխավոր մասնագետ-գնումների գծով	1	330,000		330,000
5	Առաջատար մասնագետ	5	253,000		1,265,000
	Ընդամենը	**9**			**2,638,000**
	Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժին				
1	Բաժնի պետ	1	363,000		363,000
2	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	330,000		330,000
3	Առաջատար մասնագետ/հողաշինարար/	2	253,000		506,000
4	Առաջին կարգի մասնագետ	1	187,000		187,000
	Ընդամենը	**5**			**1,386,000**

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին					
1	Բաժնի պետ	1	363,000		363,000
2	Գլխավոր մասնագետ-գյուղատնտես	1	330,000		330,000
3	Առաջատար մասնագետ	1	253,000		253,000
4	Առաջին կարգի մասնագետ	2	187,000		374,000
Ընդամենը		**5**			**1,320,000**
Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին					
1	Բաժնի պետ	1	363,000		363,000
2	Գլխավոր մասնագետ	1	330,000		330,000
3	Առաջատար մասնագետ	2	253,000		506,000
4	Առաջին կարգի մասնագետ	1	187,000		187,000
Ընդամենը		**5**			**1,386,000**
ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ համայնքային ծառայողներ		**67**			**16195000**
Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ					
1	Անասնաբույժ /պայմանագրային/	12	160,000		1,920,000
2	Համակարգող (գյուղական բնակավայրերում հանրային լսումների գործընթացի իրականացման	1	253,000		253,000
	Ընդամենը	**13**			**2,173,000**
	Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ				
1	Կազմակերպիչ	1	198,000		198,000

2	Կազմակերպիչ (նախատեսվում է գյուղական բնակավայրերում)	7	121,000		847,000
3	Վարորդ (համայնքի ղեկավարի)	1	242,000		242,000
4	Վարորդ (աշխատակազմի)	1	187,000		187,000
5	Էլեկտրիկ	1	220,000		220,000
6	Հավաքարար (համայնքապետարանի աշխատակազմի)	2	140,000		280,000
7	Հավաքարար (նախատեսվում է գյուղական բնակավայրերում)	8	121,000		968,000
8	Գործավար	1	220,000		220,000
9	Պահակ	2	121,000		242,000
10	Հսկիչ (խմելու ջրի)	1	165,000		165,000
11	Բանվոր-ջրակարգավորող	12	121,000		1,452,000
Ընդամենը		**37**			**5,021,000**
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		**117.0**			**23,389,000.0**

Աշխատակազմի քարտուղար ***Ա. Ղազարյան***

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու
2026 թվականի հունվարի 12-ի
թիվ 08-Ա որոշման

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1.Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին,

2.Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժին,

3.Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին,

4.Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին:

Վայքի համայնքապետարանի աշխատակազմ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **09-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.
1)«Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:

2)«Վայք համայնքի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 2 հավելվածի:

3)«Վայք համայնքի Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 3 հավելվածի:

4)«Վայք համայնքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 4 հավելվածի:

5)«Վայք համայնքի Խաչատուր Ներսիսյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 5 հավելվածի:

6)«Վայք համայնքի մանկապատանեական մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 6 հավելվածի:

7)«Գյուղատնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 7 հավելվածի:

8)«Վայք համայնքի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 9 հավելվածի:

9)«Վայքի բարեկարգում » ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման թիվ 8 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N **10-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑ, 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.11.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 105-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 1.2 կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Անվավեր ճանաչել Վայք համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 13-ի «Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող հողատարածքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու և համայնքի ավագանու 14.10.2025 թվականի թիվ 92-ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» թիվ 105-Ա որոշումը:

2.Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0042 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին)՝ եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների շինարարության ու դրանց սպասարկման համար (երիցատուն կառուցելու նպատակով):

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 11-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ի N 2/փ- 400 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ արոտավայր), 10-039-0329-0027 կադաստրային ծածկագրով, 12,0 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի հողեր:

2. Տալ համաձայնություն՝
1.1 Տալ համաձայնություն Վայք համայնքի Սարավան բնակավայրում գտնվող, «ՍԱՄԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող, 10-039-0307-0102 կադաստրային ծածկագրով, 2.37332 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի հողեր:

1.2 Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Փոռ բնակավայրում գտնվող, 10-043-0112-0001 կադաստրային ծածկագրով (գործող ՕԿՋ-ի մոտակայքում գտնվող), 1.25 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝
արոտավայր) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ կոմունալ օբյեկտների հողեր:

3. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2026թ. հունվարի 12
ք. Վայք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 400
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Սարավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Վայք համայնքի Սարավան բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Սարավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը:*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-039-0329-0027 կադաստրային ծածկագրով 12.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	10-039-0329-0027 կադաստրային ծածկագրով 12.0 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության էներգետիկայի հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Վայք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Սարավան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Սարավան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Ե.Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Առաքելյան

Երևան, «11» «դեկտեմբերի» 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի **N 12-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի Սարավաան բնակավայրում գտնվող 10-039-0329-0027 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 19012026-10-0008, գաղտ. LNW7EJZIXCTT) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, 12.0 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի հողեր) արևային ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 42 000 000 (քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ